ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1961 Общественные науки

Լ. Հ. Բաբայան

ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆեոդալական Հայաստանի Զաքարյան շրջանի վարչական-քաղաքական կառուցվածքի մասին խոսելիս, պետք է նկատել, որ այն սերտորեն կապված էր ֆեոդալական Վրաստանի վարչա-քաղաքական կառուցվածքի հետ։ Վրաստանում ֆեոդալական հիերարխիայի գլուխը, բարձրագույն սյուզերենը հանդիսանում էր թագավորը[1], որի իրավունքները սահմանափակվում էին բարձր ազնվականության կողմից և երկրի կառավարման բոլոր հարցերը վճռում էր՝ նկատի առնելով առաջինների կարծիքն ու կամքը[2]։

Երկրի կենտրոնական իշխանությունը իրագործվում էր «սավիզիրոյի» միջոցով (թագավորի և վեզիրների խորհուրդ)։ Այդ խորհուրդը բաղկացած էր թագավորից, վեց վեզիրներից և երկու օգնականից։ Այդ խորհրդի անդամ էին նաև Զաքարիա ու Իվանե եղբայրները, որպես երկրի կառավարման գործում հիմնական դեմքեր—գերագույն հրամանատար և խնամակալ։ Գավառներն ու շրջանները կառավարում էին էրիստավները—նախարարները—զինվորական հրամանատարները, որոնք իրենց վստահված կամ սեփականատիրական իրավունքով իրենց պատկանող շրջաններում, գավառներում, ֆեոդալական տիրույթներում հանդիսանում էին փոխարքաներ և տեղերում լիակատար տեր ու տնօրեն էին։ Գրեթե նույն վարչա-քաղաքական կառուցվածքն ուներ և Զաքարյան ինքնավար իշխանությունը, կասեինք հայկական միջնադարյան ֆեոդալական պետությունը, որովհետև ըստ էության դա պետություն էր։ Այստեղ էլ սոցիալ-քաղաքական հարաբերությունները կառուցված էին ֆեոդալական հիերարխիայի սկզբունքով։

Երկրի ֆեոդալական հիերարխիայի փաստական գլուխ և սյուզերեն էին վրացական պետության վասալներ Զաքարիա և Իվանե Զաքարյանները։ Մնացած հին և նոր ֆեոդալական տները՝ Օրբելյանները, Վաչուտյանները, Պռոշյանները, Վահրամյանները, Դոփյանները, Բագրատունի Կյուրիկյան թագավորների ժառանգները հանդիսանում էին առաջինների զորահրամանատարները և նրանց կողմից նշանակված էին որպես գավառների ու շրջանների կողմնակալներ, կառավարիչներ կամ վերակացուներ՝ ժառանգական իրավունքներով։ Սրանք տեղերում նույնպես լիակատար տեր ու տնօրեն էին։ Լինելով Զաքարյանների վասալները, նրանք իրենց հերթին, իրենց վասալների՝ ի դեմս մանր ֆեոդալական իշխանական տների նկատմամբ հանդես էին գալիս սյուզերենի գերում։

---

1 Бердзенишвили Н., Очерк из истории развития феодальных отношений в Грузии (XIII—XVII вв.), Тбилиси, 1938.

2 *Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան, 1936, հատ. Բ, էջ 52—53, 23։*

Նկատենք, որ ֆեոդալական Հայաստանում, մասնավորապես Զաքարյանների տիրապետության շրջանում, նրանց ինքնավար պետության մեջ կենտրոնական իշխանությունը միայն առերևույթ էր։

Երկրի ազատագրման ու քաղաքական վերականգնման ժամանակաշրջանում հայ ֆեոդալական վերնախավը վերահաստատեց իր քաղաքական ու կալվածատիրական իրավունքները։ Զաքարյանների շրջանում ֆեոդալական հասարակարգը իր էությամբ, ինչպես նախորդ շրջաններում, խոշոր կալվածատիրական և զինվորական ազնվականության տիրապետություն էր։

Ստ. Օրբելյանը գրում է. «Յետ որոյ հրամանաւ թագաւորին տայ փոխան հայրենեացն Լիպարտի անանցական դրով զՀրաշկաբերդ իւր գաւառովն և այլ բազում գեղօրէս ի Վայոց ձոր, ի Կոտայսն զԷլառն և այլ... գեղօրէս բազում։ ...Եւ զի նա եղեւ առաջնորդ առման Սիւնեաց և այլ բերդորոյն...»[3]։

Կամ՝ «...և ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց զոր իմ բազկաւս առեալ էի յայլազգեաց և իմ արեամբս թափեալ, և իմ պարոնայքն մեծ սիգելով այլ ինձ էին որոշեալ ...»[4] և այլն։

Զաքարյանների ֆեոդալական իշխանության ներքին կառուցվածքը հետևյալ պատկերն է ներկայացրել.

Սարգիս Զաքարյանը (կամ ինչպես աղբյուրներում հիշված է, Սարգիս Մեծը կամ Մեծ Սարգիս) Սոմխեթի տիրապետությունն ստանալուց երկու տարի հետո մահանում է։ Այդ ժամանակ արդեն նրա Զաքարիա և Իվանե որդիները հանդես էին գալիս իշխանաց իշխանի տիտղոսով, հավանաբար որպես Սարգիսի իրավունքների ժառանգորդներ։ Երբ 1192 թվականին սրանք վրացական արքունիքում բարձր դիրք են գրավում և փաստորեն հանդես գալիս Հայաստանի տիրակալների դերում, սկսում են կրել զանազան գահակալական տիտղոսներ։

Զաքարյանների մյուս ճյուղը բաժանվում է երկու թևի՝ Սարգիս Մեծի Վահրամ եղբոր երկու տղաներից Զաքարիան իր Վահրամ որդու հետ ամրանում են Հայաստանի հյուսիսային շրջաններում, իսկ մյուս որդին՝ Սարգիսը իր Շալվա և Իվանե որդիներով՝ Զավախքում։ Զաքարեի և Իվանեի ժամանակակից են Վահրամի Վահրամ թոռը, որը աղբյուրներում նշվում է Գագեցի անվամբ։ Վահրամ Գագեցին Իվանեի աթաբեկություն ստանալուց հետո, վրացական արքունիքում նշանակվում է գործակալի—մսախուրթ-ուխուցեսի պաշտոնում, իսկ Շալվան սպանվում է Ջալալ-եդ-դինի մեկ մղած մարտերում։

Այսպիսով, բուն Հայաստանում սկսում են իշխել Զաքարիան, Իվանեն և Վահրամ Գագեցին։ Սրանց ֆեոդալական տիրույթները իրենցից ներկայացնում էին ինքնուրույն ֆեոդալական առանձին իշխանություններ՝ իրենց պետական ու զինվորական պաշտոնեությամբ ու կենտրոններով։ Ինչպես ասվել է արդեն, ունեին և իրենց վասալները, ենթավասալները և կենտրոնական իշխանությունը։ Որ իսկապես կենտրոնացված, պետականության իմաստով իշխանություն և վարչական ապարատ գոյություն է ունեցել, երևում է Բուբակ իշխանաց իշխանի և Ամիր Սարդսի որդի՝ իշխանաց իշխան Խավրասին վերագրած պաշտոններից և այն ֆունկցիաներից, որոնցով օժտված էին այդ պաշտոնները։

---

3 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, 1910, Թիֆլիս, էջ 397։

4 Նույն տեղում, էջ 357։

Ինչպես Զաքարեի, այնպես և Իվանեի խոշոր վասալները նրանց ֆեոդալական իշխանություններում վարում էին զանազան պաշտոններ՝ գործակալ, կողմնակալ, սպարապետ, հեջուբ, ամիրա և այլն, իսկ իրենց տիրույթներում համարվում էին տանուտեր, նախարար նեղ իմաստով, Ստ. Օրբելյանի խոսքերով՝ «գահերեց» իշխաններ, իսկ ոմանք կրում էին իշխանաց իշխան տիտղոսը։ Սրանց տիրապետությունները աղբյուրներում հաճախ հիշվում է «իշխանություն», «տիրապետություն», «տերություն» բառերով. այսպես՝ «ի բարեպաշտ իշխանութեան Պռոշայ»... «...ի բարեպաշտ իշխանութեան Տարսայիճին...», «...ի տերութեան փառաւոր իշխանին», «իշխանութեան տեղւոյս...» և այլն[5]։

Զաքարյան ֆեոդալական իշխանությունը ունեցել է իր արքունիքը, որ մեր աղբյուրներում հիշվում է «տուն», «դիվան» բառերով և պետական-վարչական պաշտոնեության ցանցը։

Զաքարյանների արքունիքի բարձրաստիճան պաշտոնյան համարվել է արքունի գործակալը կամ, ինչպես նշում է Գ. Հովսեփյանը[6], մսախուրթ-ուխուցեսը—արքունի վեզիրը։ Ճիշտ է, մեր աղբյուրներում այդ մասին բացի Բաղնայրի ավետարանի հիշատակարանից[7] ուրիշ ուղղակի ցուցումներ չեն պահպանվել, սակայն, վերը նշված երկու անձնավորության գրված պաշտոններ և այն ֆունկցիաները, որոնք վերագրված են նրանց, իրավունք է տալիս մեզ եզրակացնելու, որ դրանք եղել են արքունի վեզիրներ կամ մսախուրթ-ուխուցեսներ։

Ստ. Օրբելյանը 1216 թվականի մի դեպքի նկարագրության կապակցությամբ գրում է. «...Եւ զի էր նորա (Իվանեի—Լ. Բ.) գործակալ ե հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց, և աւագ հէջպաց մեծ և բարեպաշտ իշխանն Բուպակ կոչեցեալ...»[8]։

Այս այն Բուբակ իշխանն է, որ Նորավանքի 1223 թվականի արձանագրության մեջ հանդես է գալիս իշխանաց իշխան տիտղոսով։

Բաղնայրի 1242 թվականին գրված ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Իշխանն պատրոն, խաւռաս որդի ամիր Սարգսին, որ էր եղբայր մաւր Կեսառոսաց հայոց և վրաց և Ափխազաց բարեպաշտին և աւ զաւրացելոցն մեծին Զաքարէի և Իւանէի... հաւատարիմ ծառայութեանն իւրոյ ընկալեալ զհատուցումս մեծաւ պատուով պատուեցաւ ըստ վրացն բարբարոյ Մսախուրթուխուցէս, որ ըստ մերումս թարգմանի գլուխ իշխեցող, և հրամանատար ամենայն իշխեցողաց և գլխավորաց տան թագաւորութեան տեսոն իւրոյ»[9]։

Մեր կարծիքով տվյալ դեպքում Բուբակը և Խավրասը հանդես են եկել Զաքարյանների արքունիքի բարձրաստիճան գործակալի—մսախուրթ-ուխուցեսի պաշտոնում. այն ֆունկցիան, որ ուներ Իվանեն, որպես մսախուրթ-ուխուցես վրացական արքունիքում, ունեին և Բուբակն ու Խավրասը Իվանեի արքունիքում։

---

5 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 127, 121, 112 և այլն։

6 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 14։

7 Մատենադարան, Ձեռագիր № 1519, էջ 295 բ։

8 Ստ. Օրբելյան, էջ 353։

9 Մատենադարան, Ձեռագիր № 1513, էջ 295ա—295 բ։

Եթե վերևում «արքունիք», ինչպես կարելի է ենթադրել բովանդակությունից, արտահայտված է «տուն» բառով, ապա ստորև բերված վկայության մեջ Իվանեի արքունիքը «Դիւան» բառով է արտահայտված։

Ստ. Օրբելյանը գրում է. «...հրամայէ (Իվանեն—Լ. Բ.) աւագ ծիկնաւպարին իւրոյ դիւանին Աւնաւիրէ անուն...»[10] և այնուհետև Վասակ Խաղբակյանի կողմից Նորավանի վանքից սուրբ նշանը վերցնելու և Իվանե աթաբեկին նվիրելու կապակցությամբ Լիպարիտ և Էլիկում Օրբելյանների բարձրացրած աղմուկի առթիվ Ստ. Օրբելյանը պատմում է, որ Իվանեն Դվինում հավաքում է հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան դիրք գրավող մարդկանց և պետական պաշտոնեության ներկայացուցիչներին, այսպես ասած յուրահատուկ բարձրաստիճան պետական խորհուրդ՝ քննելու նրանց բողոքը. «Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր, հրամայէր քննել զԲուրակն և զՄարծուանն, զԻվան դպէլն և զմեմնաշաղէլն, զմեծ Ճղաւնդիտէլն՝ որ եկեալ էր իր թագաւորութենէն, զծիրամ ծղաւրն Վարձէոյ և զծիրամ ծղաւրն Պղնձահանիցն և զմեծ մամթավարն Գարշտէուցն, զԳադեցին և զՄածնաբերդեցին և այլ բազում Դէղեպուլ՝ ևս և զզատին Տփղեաց և զզատին Անւոյ և զզատին Դվնայ և զանուանի շեխն Սուրմարլոյ, ընդ որոց և զմեծ Եպիսկոպոսն Անւոյ և զեպիսկոպոսն Բջնւոյ և զեպիսկոպոսն Հախբատայ, որք և քննեալ իրաւունք դատեցան այսպէս...»[11]։

Այստեղ կարևոր է երկու մոմենտ. նախ՝ որ գոյություն է ունեցել Իվանեի դիվանին կամ տանը կից այսպիսի պետական բարձրագույն խորհուրդ, որը քննարկել և վճռել է հարցեր, և երկրորդ՝ ինչպես տեսնում ենք, բոլոր պաշտոններից և դիրք ունեցող անձնավորություններից առաջին տեղը տրված է Բուրակին—որպես արքունի առաջին դեմքը՝ վեզիրը։ Այս վկայությունից կարելի է եզրակացնել և այն, որ Դվինը այս շրջանում եղել է Զաքարյանների վարչական կենտրոնը։

Պետական-վարչական բարձրաստիճան պաշտոնեության շարքին պետք է դասել գավառների ու շրջանների կամ «աշխարհների» կողմնակալ-վերակացուների պաշտոնը, որոնք սկզբում նշանակվում էին վրաց թագավորների, իսկ հետագայում Զաքարյանների կողմից։

Հայ ֆեոդալական դասակարգի վերնախավի առանձին ներկայացուցիչներ ժառանգական-սեփականատիրական ֆեոդալական տիրույթներ ստանալու հետ միասին, որպես իրենց ծառայությունների հատուցումն ստանում էին և այդ տիրույթներին սահմանամերձ շրջանները՝ ի իշխանություն։ Այդ շրջաններում նրանք հանդես էին գալիս որպես կենտրոնական իշխանության՝ քաղաքական-վարչական ներկայացուցիչներ, օժտված վարչական-դատական-ֆինանսական ֆունկցիաներով, միաժամանակ և լիակատար ինքնավարությամբ։ Դրանով պետք է բացատրել նրանց տիրապետությունների ինքնավար բնույթը։

«Վասակ Խաղբակյանը յուր նոր իշխանության մեջ,—գրում է Գ. Հովսեփյանը,—հաստատված էր Իվանե աթաբակի կողմից իբրև «կողմնակալ» կամ «կողմնապահ» թեև ժառանգական իրավունքով, բայց որպես ներկայացուցիչ գերագույն իշխանավորի. «կողմնապահությունները մաս են գերագույն իշխանի տերության կամ պետության ամբողջության»[12]։

---

10 Ստ. Օրբելյան, էջ 354։

11 Նույն տեղում, էջ 355—356։

12 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք, էջ 72։

Աղբյուրների վկայություններից երևում է, որ Զաքարյանների շրջանում երեք հիմնական կողմնակալություններ են ստեղծվել. Սյունիքում՝ Օրբելյանները, Այրարատում՝ Վաչուտյանները և Վայոց ձորում՝ Խաղբակյան-Պռոշյանները։

Պատահական չպետք է համարել, որ Զաքարյանները իրենց ստեղծագործություն հանդիսացող ֆեոդալական նոր տներին էին վստահել այդպիսի բավական պատասխանատու և բարձրաստիճան դիրքեր։ Չէ՞ որ Խաղբակյան-Պռոշյանները, Վաչուտյանները, Օրբելյանները նրանց բանակի սյուներն էին, նրանց հավատարիմները։ Վերջինները իրենց դիրքի և ունեցվածքի համար պարտական էին իրենց սյուզերենին՝ Զաքարյան ֆեոդալական տան։ Սրանց էր վստահված իրենց տերիտորիաների ռազմա-քաղաքական ուժերի ղեկավարման գործը։ Հանդիսանալով կողմնակալներ, նրանք միաժամանակ հանդիսանում էին Զաքարյանների տան առաջին վասալները։

Որ կողմնակալ-վերակացուները պետական վարչական պաշտոնեության ներկայացուցիչներ էին, ավելի պարզ երևում է Նորավանքի Տարսայիճ Օրբելյանի մահարձանի 1289 թվականի արձանագրությունից. «Ի թվիս ՉԼԸ. այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին, հզաւր եւ մեծ գործակալին եւ քաջապահ մենամարտին Աթաբակ Տարսայիճին»[13]։

Կողմնակալները, վերակացուները հանդես էին գալիս որպես Զաքարյանների ֆեոդալական իշխանության գործակալներ։

Զաքարյան տիրապետության շրջանի բարձրաստիճան պաշտոններից էր և սպարապետությունը։

Հայկական տերիտորիաների ազատագրման պրոցեսում վերականգնվող, նախկին և նոր առաջացած ֆեոդալական տները աստիճանաբար ստեղծել էին իրենց հեծելազորային և հետևակային զինվորական միավորները։ Այդ շատ ավելի արագ կատարվեց երկրի հյուսիսային շրջաններում, որոնք մտնելով վրացական պետության հովանավորության ներքո, հնարավորություն ստացան կազմակերպել և ամբապնդել իրենց ֆեոդալական ուժերը և վրացական բանակի սիստեմում, վրաց ուժերի համագործակցությամբ, ազատագրել երկրի մյուս տերիտորիաները։ Այդ ժամանակ երկրի հյուսիսային շրջանները, հատկապես Լոռին, Գուգարքը դարձան հայկական դեռևս չազատագրված գավառների հայ ազնվականության ուժերի համախմբման ու կազմակերպման վայրերը։ Զաքարյանները ի մի համախմբելով այդ բոլոր ուժերը, կազմակերպեցին հայկական բանակ, որն արդեն 12-րդ դարի 80-ական թվականներին զգալի ուժ էր ներկայացնում։

Հայկական զինված ուժերը վրացական բանակի սիստեմում ունեին իրենց գլխավոր հրամանատարը, որի անհրաժեշտությունը, մեզ թվում է, բխում էր այն բանից, որ ոչ միշտ էին հայ-վրացական ուժերը միասին հանդես գալիս։ Առանձին դեպքերում հայկական բանակը անջատաբար էր գործում։ Այդ մասին Քարթլիս Ցխովրեբայում պահպանված են բավական որոշակի վկայություններ։ Այնտեղ, որտեղ ամբողջ վրացական բանակն էր գործում, պատմիչները նշում են «Թամարի զորքը» կամ «վրացիք» կամ «ապա Վրաց միացեալ ուժերը» և այլն, իսկ այնտեղ, որտեղ հայկական ուժերն են գործել, շեշտվում է «Մխարգրձելները գնացին»։

---

13 Վիմական տարեգիր, էջ 191։

«Սրանից հետո Մխարգրձելները՝ Սադիրի (Սարգսի—Լ. Բ.) և Վահրամի որդիք... ավագ Զաքարիան և (մյուս) Զաքարիան՝... և Հովհանն (Իվանեն) և Սարգիսն՝... գնացին և արշավեցին Դվինի երկրի վրա և հաղթող ու ավարով լի վերադարձողներին հետամուտ եղան Դվինեցոց և Սուրմարեցոց արշավախմբերը, որոնց հետ տեղի ունեցավ կատաղի պատերազմ, որը նույն Մխարգրձելների հաղթությամբ վերջացավ...»[14]։

Համաձայն վասալային հիերարխիկ սկզբունքի, պատերազմների ժամանակ սյուզերենը, տվյալ դեպքում սկզբում վրաց թագավորները, այնուհետև Զաքարյանները, նշանակում էին իրենց վասալ ֆեոդալ զորավարների զինվորական ուժերի հավաքատեղին, որտեղից և շարժվում էին՝ իրականացնելու այս կամ այն ռազմական գործողությունը[15]։

Զաքարյանների վասալ հայկական խոշոր ֆեոդալական տները, հատկապես կողմնակալ իշխանները, աղբյուրների վկայությամբ, ունեցել են իրենց զինված ուժերի հրամանատար-սպարապետները, որոնք պատերազմական գործողությունների ժամանակ ենթարկվել են հայկական միացյալ ուժերի գլխավոր հրամանատարին, իսկ վերջինս՝ վրաց-հայկական միացյալ ուժերի գերագույն հրամանատարին։

Պրոֆ. Խ. Սամվելյանի այն կարծիքը, թե «հայ մատենագրության մեջ և արձանագրություններում Զաքարեի ամբողջական տիտղոսը եղել է մեծ մասամբ ամիր-սպասալար, որ համապատասխանում է վրաց «մանդատորտ-ախուցե» տիտղոսին և որ այդ կրկնակի տիտղոսը վկայում է, որ մի անձնավորության մեջ կենտրոնացել էին քաղաքացիական և զորական գերագույն իշխանությունները»[16], ճիշտ չէ։ Այստեղ ամիր տիտղոսը ոչ մի առնչություն չունի քաղաքացիական գերագույն իշխանության հետ. նա արտահայտում է զինվորական գերագույն պաշտոնի աստիճանը։ Սպարապետ տիտղոսը նախարարական շրջանում նշանակել է գլխավոր հրամանատար, սակայն, նա իր վաղեմի իմաստը Բագրատունիների շրջանում անդամ ամբողջությամբ չէր պահպանում։ Պետության զինված ուժերի գլխավոր հրամանատարի այդ տիտղոսը Զաքարյանների շրջանում, ինչպես կտեսնենք, վերագրված է Զաքարյանների վասալ ֆեոդալական իշխանությունների զորահրամանատարներին, թերևս նույն պրոցեսն է ապրել և պարսկական սպասալար տիտղոսը։ Ուստի սոցիալ-քաղաքական նոր պայմաններում, ինչպես Վրաստանում, այնպես և հայ միջավայրում սպարապետի նախկին իմաստը արտահայտելու համար պարսիկներից փոխ է առնված համապատասխան տիտղոս. ինչ վերաբերում է հայկական աղբյուրներում Զաքարյաններին սպարապետ տիտղոսը վերագրելուն, նկատենք, որ շատ հազվագյուտ, այն էլ հիմնականում հիշատակարաններում և վիմական արձանագրություններում է հիշված, որը տրադիցիայի դրսևորման հետևանք է միայն։ Ստ. Օրբելյանը իր ժամանակագրության մեջ շեշտում է «Մեծ սպարապետքն վրաց»[17] (ընդգծումը մերն է—Լ. Բ.)։

Զաքարյան տան 3 ավագ ներկայացուցիչների ֆեոդալական իշխանությունը-

---

14 Մելիքսեթ-Բեկ, նշված աշխ., հ. Բ, էջ 12, տե՛ս և էջ 14։

15 Նույն տեղում, էջ 13, 15։

16 Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, Երևան, 1939, էջ 241։

17 Ժամանակագրություն Ստ. Օրբելյանի, Երևան, 1942։

ներր և կողմնակալ ֆեոդալական տներր ունեին իրենց սեփական զորքր, սպարապետներր, դրոշը, պատերազմական փողր[18]։

Ներսես Շնորհալու մոտ կարդում ենք. «Եւ նախ և առաջին առ իշխանսդ որբ ի նուազեալ ժամանակիս տիրէք ի տեղիս բազմաց և կամ սակաւուց, զորաց և գաւառաց...»[19]։

Մխիթար Այրիվանեցին Ստ. Սյունեցու վկայության մեջ Պռոշի մասին գրում է՝ «կարգեալ հազարապետ հայոց» և որովհետև նա վկայում է, որ Գանձակի պատերազմից անմիջապես հետո «...փոխեցաւ ի Քրիստոս Վասակ իշխանաց իշխան և էառ զդրոշայն որդի նորա քաջն Պռոշ», ապա Պռոշի որդու՝ Ամիր-Հասան Ա-ի մասին՝ «մեծ սպարապետ էր տանն Ավագին որդւոյ Իվանէ Աթաբակին»[20], հայտնի է դառնում, որ Պռոշին հազարապետ էր կարգել Իվանե աթաբեկը Գանձակի պատերազմից անմիջապես հետո և «հազարապետ հայոց» պետք է հասկանալ աթաբեկի զինված ուժերի սպարապետի իմաստով։

«...Այնտեղ նրան (թագավորին) (Գեորգ—Գիորգի էաշային—Լ. Բ.) միացան Հովհան (Իվանե) Աթաբակն և սրա եղբորորդի՝ Զաքարիա ամիր-սպասալարի որդի Շահնշահր (Շանշեն), նաև Վահրամ (Վարամ) Գագեցի գործակալն (մսախուրթուխուցեսն) իրենց զորքերով...»[21]։

Գանձակեցու մոտ կարդում ենք.

«...Մանաւանդ մեծամեծ իշխանքն՝ Աւագն և Շահնշահն, Վահրամ և որդի իւր Աղսլուղէն, և Խաչենեցիքն, Ջալալն Հասան, և զօրք իւր, և ազգականքն, և Գրիգոր Դոփին որդի, մօրաքուեր որդի Ջալալին, և այլ իշխանքն և զօրք նոցին ըստ կարի իւրեանց. և այս եղև ի ՈՂԲ (1243) թուականիս հայոց»[22]։

1292 թ. մի հիշատակարանում Գրիգոր Դոփյանը կոչված է «մեծ սպարապետ տանն Աւագին, որդւոյ Իվանէ Աթաբակին»[23]։

Շահուռնեցի Ամագին, որ իշխում էր Վայոց ձորի Հերհեր գյուղում և շրջակայքում, «նիզակակալ և կորովածիգ ասպարապետ» էր «ի դրան թագաւորաշուք իշխանաց Բուրթելին և Վախախին» (Վարդաշենի եկեղեցու ավետարանի հիշատակարանում)[24]։ Գ. Հովսեփյանը գրում է, որ «Վարդանի՝ Դանիելի մեկնութեան վերջում կամ Զագավանից ժողովի կանոնների նախաբանի մեջ, ինչպես և Կեչառեցու ողբի, ապա քարոզչական մատենագրության մեջ հիշատակություն ունենք և բարեմաղթություններ իշխանների և նրանց հեծելազորքի մասին (էջմիածին, ձեռ. № 1520, 116ա, նաև № 2049, 359բ, Շողակաթ Ա 45)», այնուհետև բերում է 1333 թ. «Ի սբ. ուխտս Կոշայ» գրված ճաշոցի Հակոբ գրչի վկայությունը Արագածոտն գավառի Վահրամ իշխանի մասին, «որդւոյ մեծին Իւանէի», «զոր տէր Յիսուս պահեսցէ ըստ խաղաղական կենաց և երկար ժամանակաց ամենայն հեծելազօրքն իւրովք փառաց ի փառս բարձրանալով և զօրացուսցէ զսուր նորա ի վերայ թշնամեաց իւրոց»[25]։

---

18 Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 20—21, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Դ, Սրսաս, 1952, էջ 169—170։

19 Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 92։

20 Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 20։

21 Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, էջ 51։

22 Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, Փ. 269։

23 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 20—21։

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում։

Գ. Հովսեփյանը շարունակում է. «Մխիթար Գոշը պատմում է Մահկանաբերդի իշխանների պապ՝ Քրդի մասին, որ յուր ավագ եղբայր Վասակի մահվանից հետո (Գեորգի Գ վրաց թագավորի դեմ ապստամբությունը ճնշելուց հետո Վասակ և Քուրդ եղբայրները վախենալով վրաց թագավորի վրեժխնդրությունից, փախել էին Կարին) Կարնո սուլթանից ստանում է «զդրոշ նորա և զփող և զիշխանութիւն»։ Գոշը ավելի է պարզում—ինչպես թագավորն է պատերազմ դնում «յուր դրօշիւք և փողօք», այնպես էլ «իշխանք ինքեանց դրօշիւք և փողոք իցեն», եթե թագավորը հետները չլինի «փողս եւ դրօշս տալ իշխանի ի վերայ գաւառի եւ բերդի լիցի»[26]։

Աղբյուրներից պարզվում է, որ Զաքարյանների տիրապետության շրջանում պետական-վարչական բարձրաստիճան պաշտոններից էր ամիրայությունը։ Անի քաղաքի կառավարիչները, որոնք հանդիսանում էին Զաքարեի ֆեոդալական տան գործակալները, կոչվում էին ամիրա[27]։ 13-րդ դարի երկրորդ տասնամյակում Անի քաղաքի ամիրա է հիշվում Վահրամ Պահլավունին[28]։ Պետք է ենթադրել, որ այս տոհմի ներկայացուցիչներից մի քանիսը հետագայում նույնպես վարել են Անիի ամիրայության պաշտոնը։ Կարսը գրավելուց հետո, ինչպես վրաց աղբյուրն է վկայում, Թամար թագուհին Հովհան (Իվանե) Ախալցիխեցուն տվեց ամիրաց ամիրայություն[29], Տփխիսի ամիրապետի դերում հիշված է Քուրդ Արծրունին[30]։ Ամիրաների ֆունկցիաները քաղաքներում, մեր կարծիքով, ավելի շատ վարչական բնույթ են ունեցել։ Այդ ֆունկցիաները արտահայտվել են քաղաքային ներքին կյանքի, առևտրականների և արհեստավորության նկատմամբ վերահսկողության, հարկադրման և հարկահանման գործի կարգավորման, զորահավաքի, ինչպես և քաղաքի պաշտպանության դեպքում ժողովրդի ուժերի կազմակերպման մեջ։

Պետք է ենթադրել, որ ամիրաները քաղաքներում իրենց ֆունկցիաները իրականացնում էին քաղաքային խորհուրդների կամ վարչությունների միջոցով։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը՝ ելնելով վիմական մի քանի արձանագրություններում պահպանված ամիրա, ամիրայություն բառերից, եզրակացնում է, որ «իշխանական մեծ շրջաններում ևս ըստ երևույթին, գոյություն են ունեցել բարձր գործակալ պաշտոնյաներ, որոնք նույնպես կոչվել են ամիրաներ»[31]։

Մայրաքաղաքի՝ 1260 թվականի արձանագրության մեջ կարդում ենք. «...ի յիշխանութեան Ուքանին եւ յամիրութեան Փախրայդինին...»[32]։

Օշականի՝ 1288 թվականի՝ «...ես Գէշմարդս էի ամիրայ եւ Հաւիկս ձեռնաւոր, թողաք զսբ Կարապետին այգեացն զՅաւշականու, զՄիրինու զձեռնաւորին զհարկն զինչ որ կայր...»[33]։

---

26 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 74—75, ծանոթ. մեջ։

27 Նույն տեղում, էջ 14, Խ. Սամվելյան, նշված աշխատությունը, էջ 241, Հ. Մանանդյան, Գ, էջ 171։

28 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 14։

29 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, հատ. Բ, էջ 20, 36։

30 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 21։

31 Հ. Մանանդյան, Գ, էջ 171։

32 Վիմական տարեգիր, էջ 102։

33 Նույն տեղում, էջ 130։

Նորավանքի՝ 1275 թվականի՝ «...Իմ գիր է Տարսայիճիս իշխանիս, որ իշխեցող էի Սիւնեաց նահանգիս, ...ու զՀալէձորոյ հարկն սահմանեցաք ի տարում վաթսուն սպիտակ տայ, այլ ազատ է յամէն հարկաց, այլ ոչ ամիրայ ոչ պարոն, ոչ ձեռնաւորի ոչ ինչ հաշիվ չկա հետ Հալէձորոյ...»[34]։

Այս երեք արձանագրություններից, առաջինում «յամիրութեան» հասկացությունը կապված է Ուքանի «յիշխանութեան» հետ և պետք է ենթագրել, որ ամիրա Փախրագինը Ուքանի ենթակա վարչական պաշտոնյա է, նրա ֆեոդալական տիրույթի, իշխանության կառավարիչը։ Եթե հեջուբ տիտղոսով հանդես էին գալիս Զաքարեի և Իվանեի ֆեոդալական տների կառավարիչ-պաշտոնյաները, ապա նրանց վասալների իշխանություններում կամ տիրույթներում այդ նույն կառավարիչ-պաշտոնյայի դերում հանդես էին գալիս ամիրաներ։ Որ ամիրան վարչական պաշտոնյայի տիտղոս է և մեզ հետաքրքրող շրջանում ունեցել է տեղական նշանակություն, պարզվում է վերը բերված երկրորդ և երրորդ արձանագրություններից։ Սյունյաց Տարսայիճ իշխանաց իշխանը պարոնից առաջ նշում է ամիրա։ Եթե այստեղ պարոն բառը սեփականատեր, տեր կամ իշխան իմաստն է արտահայտում, որը, պետք է ենթադրել, Տարսայիճի գերիշխանության ներքո է գտնվում, վասալական կախվածության մեջ է նրանից, ապա ամիրան այստեղ ավելի մեծ մասշտաբի պաշտոնյայի դերում է հանդես գալիս, տվյալ դեպքում Տարսայիճի իշխանության մասշտաբի վարչական պաշտոնեության ներկայացուցիչ է. պարոնը՝ Հալիձորի շրջանի իշխանը կամ տերը, իսկ ձեռնավորը վերջինիս վարչական պաշտոնյան, կոնկրետ՝ Հալիձորում։ Այն, որ վերջին երկու արձանագրություններում «ամիրա», «ամիրայություն» հասկացությունները հանդես են գալիս կապված հարկային տերմինների հետ, և երկու տեղում էլ ամիրաները նշված են ձեռնավորների—հարկահանների հետ և նրանցից առաջ են հիշված, հիմք է տալիս եզրակացնելու, որ, եթե ամիրաները քաղաքներում հանդես էին գալիս կառավարիչների դերում, ապա ֆեոդալական տիրույթներում նրանք հիմնականում ղեկավարում են ֆեոդալական տնտեսությունները, գլխավորապես հարկային-ֆինանսական գործը, որպես վարչական ապարատ ունենալով ձեռնավորներին, որոնց միջոցով իրականացվում էր հարկադրումն ու հարկահանումը և ֆեոդալական մյուս ծառայությունները։

Գ. Հովսեփյանը և Խ. Սամվելյանը «ամիրա» տերմինը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում դիտում են որպես քաղաքների հետ կապված վարչական պաշտոնյայի տիտղոս։ Սամվելյանը գրում է. «Ուրեմն ամիր տիտղոսը համապատասխանում է բյուգանդական տիրապետության ժամանակվա կատապանին... քաղաքի վարչապետ»[35]։ Ըստ Հովսեփյանի՝ «ամիրայության պաշտոնը կապված էր քաղաքական և քաղաքների կառավարության հետ»[36]։

Նկատենք, որ «ամիր» կամ «ամիրա» հասկացողությունը Զաքարյանների տիրապետության շրջանում հայկական ֆեոդալական միջավայրում ֆեոդալական ծառայության անհամեմատ շատ նեղ իմաստավորում էր պարունակում, քան այն ուներ մահմեդական իշխանություններում։ Ադրբեջանի տերիտորիայում էմիրներ էին կոչվում զինվորական ֆեոդալները, որոնք տիրում էին խոշոր

---

34 Նույն տեղում, էջ 149—150։

35 Խ. Սամվելյան, նշված աշխատություն, էջ 241։

36 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 21։

կալվածների, ունեին մեծ քանակությամբ անասուններ և միաժամանակ աչքի ընկնող դեր էին կատարում երկրի կառավարման սիստեմում[37]։ Ամիրա տիտղոսը պատկանում է, մեր կարծիքով, այն հասկացությունների շարքին, որոնք, ինչպես նշել ենք, սոցիալ-քաղաքական նոր պայմաններում կորցնում են իրենց նախկին իմաստը, կամ նեղանում է նրանց նախկին իմաստը՝ համապատասխան նոր սոցիալ-քաղաքական պայմանների։

«Ամիր»—«ամիրա» կամ «էմիր», ինչպես գրում է պրոֆ. Խ. Սամվելյանը, «կոչվում էր ծառայության գերագույն աստիճանի վրա կանգնած ֆեոդալ իշխանը, այն է՝ բարձրագույն կառավարիչը՝ փոխարքան, իսկ հետագայում խալիֆաթի քայքայումով՝ գերագույն տերը, երկրի հրամանատարը, որի փոխարքան էր առաջ»[38]։ Սելջուկյան լայնածավալ պետության քայքայման և անկման շրջանում ֆեոդալական կենտրոնախույս ուժերի պայքարը, ինչպես հայտնի է, ավարտվում է պետության մասնատվածությամբ, ստեղծվում են անհամեմատ փոքր ֆեոդալական իշխանություններ՝ ամիրայություններ։ Ֆեոդալական տիրապետությունների տերիտորիալ փոքրացման պրոցեսին զուգահեռ, մեր կարծիքով, փոքրացել կամ նեղացել է «ամիրա» հասկացության վաղեմի իմաստը, այն արդեն արաբական տիրապետության ժամանակաշրջանի ամիրան չէ։ Վրաստանի և Զաքարյանների իշխանության պայմաններում այն արդեն ստացել էր քաղաքների և ավելի ուշ՝ ֆեոդալական փոքր իշխանությունների մասշտաբի վարչական պաշտոնյայի իմաստ։

Քաղաքական անկախության վերականգնման զուգընթաց վերակենդանանում են և տվյալ ժողովրդի քաղաքական-քաղաքացիական-վարչական ֆեոդալական ինստիտուտները, դուրս են մղվում օտար հասկացությունները։ Այդպիսի դեպքերում օտար նվաճողների տիրապետության ժամանակաշրջանից ժառանգություն են մնում առանձին բառեր—տերմիններ։ Ամիր-ամիրա տերմին մի շարք այլ տերմինների շարքում վրաց և հայ ժողովուրդներին ժառանգություն էր մնացել արաբական և սելջուկյան տիրապետությունից։ Ժառանգություն մնացած ամիրա տերմինը, ինչպես տեսանք, վրաց և հայ ֆեոդալական միջավայրում պահպանվել է արդեն համապատասխանեցված տեղի սոցիալ-քաղաքական իրադրությանը։

Տփխիսի, Անիի, հավանական է և մի շարք այլ խոշոր քաղաքների ղեկավարման նախկին ձևը, որպես ֆեոդալական տիրույթների, որոնք կազմում էին ֆեոդալ իշխանի ամբողջ տիրապետության մի մասը և կառավարվում էին ինչպես մյուս շրջանները կամ գավառները—կալվածքները, այլևս քաղաքային կյանքի բուռն զարգացման նոր պայմաններում չէր բավարարում, չէր համապատասխանում նոր քաղաքի ներքին կյանքին ու նրա պահանջներին։ Անհրաժեշտ էին հատուկ մարդիկ, որոնք ամբողջապես պետք է զբաղվեին քաղաքներով, ահա այդպիսի կառավարիչ-պաշտոնյաները կոչվեցին ամիրաներ։

Պրոֆ. Խ. Սամվելյանը կարծում է, որ Զաքարիա իշխանը, որ իր եղբայր Իվանեի հետ միասին վերականգնեց Հայաստանը՝ իբրև ինքնավար մի պետություն, կրում էր ամիր տիտղոսը, որպես գերագույն վրացական կառավարիչ և հետո որպես փոխարքա Հայաստանի։ Հայ մատենագրական աղբյուրներում ,—շարունակում է Սամվելյանը,—մանավանդ վիմական արձանագրու-

---

37 А. А. Али-заде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв., Баку, 1956, стр. 68.

38 Խ. Սամվելյան, նշված աշխատությունը, էջ 240։

թյուններում, Զաքարիան ամիր տիտղոսի հետ՝ հաճախ կոչվում էր Շահնշահ, բագավոր: Այդ հանգամանքը արդեն ցույց է տալիս, թե ինչ մեծ նշանակություն ուներ ամիր տիտղոսը»[39]։ Այս կարծիքը հիմնականում սխալ է և ահա թե ինչու։

Նախ, ինչպես հայկական, այնպես և վրացական աղբյուրներում Զաքարիան և ոչ մի տեղ առանձին «ամիր» տիտղոսով չի հիշված, նա միշտ հանդես է գալիս «ամիրսպասալար» տիտղոսով և երկրորդ՝ նա վրացական արքունիքում երբեք որպես «ամիրսպասալար» գերագույն վրացական կառավարիչի դերում չի եղել. այդ դերում նա հանդես է եկել որպես մանգատուրթ-ուխուցես, որը չի նշանակում գլխավոր զորահրամանատար, ինչպես շատ հաճախ շփոթում են, այլ նշանակում է թագավորահայր—կնքահայր։

«Ամիրսպասալար» տիտղոսի մասին վկայակոչենք Ասլան Շահնազարյանին, որը մեր կարծիքով՝ իր «Զաքարյան երկայնաբազուկ տոհմի ծագումն» հոդվածում[40] բավական որոշակի ու պարզ բացատրություն է տալիս. «Ամիրսպասալար տիտղոսը վրացիները և հայերը փոխ են առել պարսիկներից, բառը կազմված է արաբերեն ամիր (հրամայող, իշխող), պարսկերեն սպա (զորք) և սալար—զորապետ, միասին կնշանակի գլխավոր հրամանատար զորաց, մեծ սպարապետ»[41]։

Զաքարեի՝ «ամիրսպասալար» տիտղոսի հետ «շահնշահ» կամ «թագավոր» տիտղոսներ կրելը ոչ մի կապ չունի «ամիր» հասկացության հետ, ընդհակառակը, վերջին տիտղոսները կրելը «ամիրսպասալար» տիտղոսի հետ հենց ցույց է տալիս, որ «ամիր» տիտղոսը գերագույն կառավարիչի կամ փոխարքայի իմաստ չուներ, ինչպես նշում է նա, «շահնշահ» և «թագավոր» տիտղոսներն են լրացնում Զաքարեի զինվորական գերագույնության հետ և քաղաքական-քաղաքացիական գերագույնություններ։ Սամվելյանը ինքը հենց իր առաջ քաշած հետևությունը՝ ամիրայի «գերագույն» նշանակությունը հերքում է. «Նույն այդ Զաքարյաս դարաշրջանում Անի քաղաքի գերագույն կառավարիչները, որոնք նշանակվում էին վրաց թագավորների կամ Զաքարյանների կողմից, կոչվում էին ամիր...»[42]։

Ինչ է ստացվում. «գերագույն վրացական կառավարիչ», «Հայաստանի փոխարքա», «ամիր» տիտղոսները կրող Զաքարեի կողքին դրված է Անի քաղաքի վարչապետ ամիր Վահրամ Պահլավունին։ Խ. Սամվելյանի ամիր-կատապան համեմատությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի համար ավելի ճիշտ պետք է համարել, քան նրա վերոհիշյալ կարծիքը։

Մեր կարծիքով, համոզիչ չէ նաև պրոֆ. Սամվելյանի այն թեզը[43], թե աբաբեկ տերմինը գրեթե համազոր է ամիր տիտղոսին։ Աբաբեկ տիտղոսը և նրան հատկանշական ֆունկցիաները, այս շրջանում միանգամայն այլ են և հիմք չկա համազորություն տեսնել այդ երկու տերմինների մեջ։

Հայտնի չէ Սամվելյանի կողմից Իվանեի վրաց արքունիքի թիկնապահ զորքի հրամանատար լինելու աղբյուրը։ Թերևս Սամվելյանի աղբյուրը Գ. Հովսեփյանի Խաղբակյանք կամ Պռոշյանք-ի 8-րդ էջում «Իվանեն նշանակվում է

---

39 Խ. Սամվելյան, նշված աշխատ., էջ 240։

40 Շողակաթ, 1913, էջ 83։

41 Նույն տեղում։

42 Խ. Սամվելյան, նշված աշխատ., էջ 240—41։

43 Նույն տեղում, էջ 241։

պալատական զորքերի հրամանատար» գրածն է և պարզ չէ, թե ինչն է նկատի ունեցել Հովսեփյանը։ Մսախուրթ-ուխուցեսորա կամ մսախուրթ-ուխուցես բառը նշանակում է արքունի մեծ վեզիր[44]։ Հավանական է արքունի մեծ վեզիրի իրավասության տակ է գտնվել և պալատական զորքերի հրամանատարության զեկավարությունը։ Իսկ եթե հեղինակը աթաբեկ տիտղոսին է վերագրում զինվորական ֆունկցիա, ապա սխալվում է։

Եթե իշխանաց իշխաններ Ռուբակը և Խավրասը որպես «գլուխ իշխեցող և հրամանատար ամենայն իշխեցողաց և գլխավորաց»-ի արքունի վեզիրի—մսախուրթ-ուխուցեսի դերում էին հանդես գալիս Զաքարյանների տանը կամ արքունիքում, այլ խոսքով՝ Զաքարյանների պետության մասշտաբի գործիչներ էին, ապա մեզ թվում է գրեթե նույն ֆունկցիաներով էին օժտված աղբյուրներում պահպանված հեջուբները Զաքարեի և Իվանեի, թերևս և մյուս խոշոր ֆեոդալական իշխանություններում։ Ստ. Օրբելյանը գրում է. «Եւ զի էր նորա գործակալ եւ հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց, և աւազ հէջպաց...»[45] (ընդգծումը մերն է—Լ. Բ.)։

1313 թվականի մի հիշատակարանում կարդում ենք այն մասին, որ Զաքարիա Պահլավունին հանդիսացել է Զաքարիա ամիրսպասալարի որդի՝ Շահրնշահի «հեջուբ և առաջնորդ տանս մեծի աթաբակ ամիր սպասալար Շահնշահի»[46]։

Գ. Հովսեփյանը «առաջնորդ» բառին վերագրել է զորավար իմաստը, որը ճիշտ չէ։ Շահնշահի (անձնանուն է—Լ. Բ.) ֆեոդալական տունը ունեցել է իր սպարապետը։ «Առաջնորդը» այստեղ պետք է հասկանալ հեջուբի ֆունկցիաներից թերևս ամենակարևորը ու առաջնայինը, այդ տիտղոսի էությունը ավելի որոշակի ու հասկանալի բնութագրողը։

Այդ նույն ժամանակ Իվանեի որդի Ավագի տան հեջուբն էր Խաչենի տեր Վախտանգի թոռը, Հասանի տղա Գրիգորը, որ Գանձակեցին «Տղա» մականունն է տալիս... «և առաքեաց զԳրիգորն, զոր Տղայն կոչէին, գգուանօք յազատացն Խաչենոյ զվերակացու տանն իւրոյ, յառաջ քան զինքն երթալ հանդիպիլ գլխավորի նորա, զոր Զարմա-Ղանն կոչէին...»[47]։ Այնուհետև նույն հեղինակի մոտ կարդում ենք. «...մինչ մեռանէր նա (Իվանեն—Լ. Բ.), յանձնեաց զորդի իւր և զտուն յիշխան ոմն իւր սնուցած՝ Գրիգոր անուն, զոր Տղայն կոչէին»[48]։

Հոռոմոսի 1228 թվականի արձանագրության մեջ կարդում ենք. «Ի թ. ՈՀԷ կամաւ ամենակալին այս մեր դիր յիշատակի է Հեճուպ Գրիգորոյ, որդո Հասանա եւ եղբայր որդեաց իմոց, եւ Իշխանիս, որդո Քրդին, եւ եղբայրորդեաց իմոց, տերանց սբ ուխտիս Վանացս Հոռոմոսի, որ հաստատեցաք արձանագրով՝ պատրոն ով լինի այս տեղոյս ի յարանց կամ ի կանանց ով կաշառաւք հայր դնէ, այնպիսին նզովս առցէ... Եւ հայր եւ այլ գործաւորք որ կաշառք տան յայտնի կամ ի ծածուկ, յերկնաւոր հաւրէն...անիծեալ եղիցի... եւ հայր, որ ի վանիցս հաց ծախէ կամ ի Վանից ի բացս խորէ, նզովեալ եղիցի... եթէ մեծ եւ եթէ փոքր կարծիս առնու թէ հայր կամ այլ գործաւոր կաշառք է տվել և վրէժխնդիր չլինի վերադրելոցս, նզովիցս տէր է ամէն»[49]։

44 Հ. Մանանդյան, Գ, էջ 128։
45 Ստ. Օրբելյան, էջ 353։
46 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 15։
47 Կիրակոս Գանձակեցի, էջ 242։
48 Նույն տեղում, էջ 210։
49 Վիմական տարեգիր, էջ 71—72։

Այս արձանագրությունից նույնպես պարզվում է հեջուրի բարձր դիրքը։ Կաշառք վերցնելու և կամ հաց ծախելու համար «հաստատեցաք արձանագրով» նախազգուշացումը, անեծքը պատրոնների և եկեղեցական հայրերին է վերաբերում։ Եթե նկատի ունենանք և այն, որ Ռուսուդան վրաց թագուհին իր մահից առաջ կտակով իր որդուն հանձնում է աթաբեկ Ավագին, այն ինչ Իվանեն արել էր իր որդու և տան հետ, հանձնելով նրանց հեջուր Գրիգորին, ապա պարզ է դառնում հեջուրների դերը, դիրքը և հեղինակությունը ֆեոդալական իշխանության սահմաններում։

Գոշա վանքի՝ 1198 թվականի արձանագրության մեջ կարդում ենք. «Ես Գրիգոր, Հեջուր ամիր սպասալար Աւագին, որդի Սմբատայ որդւոյ մեծին Վախտանգայ, կողմնապետաց աշխարհին Արցախոյ, առեալ աթաբէգէ Իւանէիս եւ իւրեան ազգի առաջնորդ կացոյց, զի ոչ ունէին զաւակ... խնդրեցի զայս եկեղեցի ինձ շիրիմ հանգստեան. Աւազն ինձ երետ և միաբանքս սահմանեցին... պատարագել... Ով որ կարդայք, Աւագին երկար կեանք խնդրեցէք եւ Գրիգորոյ մեղաց թողութիւն...»[50] (ընդգծումը մերն է—Լ. Բ.)։

Հեջուր բառը կապված Գրիգոր անվան հետ պահպանված ունենք 4 տեղ—Վիմական արձանագրություններում և մեկ՝ Գանձակեցու մոտ՝ «Տղա» մականունը կրող Գրիգորին վերագրված վերակացու պաշտոնը (նույն Գրիգորը հիշված է մի ուրիշ աղբյուրում, որից նույնպես երևում է, որ խոսքը այդ «Տղա» Գրիգոր վերակացուին է վերաբերում, այլ խոսքով՝ հեջուրին)։ Որ իսկապես Գանձակեցու մոտ հիշված Գրիգոր վերակացուն նույն Գրիգոր հեջուրն է, որը նշված է 1198 թվականի Գոշա վանքի արձանագրության մեջ, բերենք և Գանձակեցու վկայությունը։

«...Մինչ մեռանէր նա, յանձնեաց զորդի իւր և զտուն յիշխան ումն իւր սնուցած՝ Գրիգոր անուն, զոր Տղայն կոչէին։ Սա խնդրեաց յԱւագէն, յորդւոյն Իւանէի, զվանքն Գետիկ, իւր տեղի գերեզմանի...»[51]։

Ինչպես տեսնում ենք, Գոշա վանքի արձանագրության մեջ և Գանձակեցու մոտ հիշված Գրիգորները միևնույն անձնավորությունն է։

Այս իմաստով նշված արձանագրության տարեթիվը բացահայտ թյուրիմացություն պետք է համարել հետևյալ պատճառներով. Ավագը, հասակը հաշվի առնելով, 1198 թվականին ամիրսպասալար չէր կարող լինել։ Գանձակեցին Շահնշահի մասին գրում է. «մանուկ տիոք... զոր սնոյց Իւանէ ընդ որդւոյ իւրում... զոր Աւագն կոչէին» և ապա Գանձակեցին նշում է, որ Իվանեն մահից առաջ տունը և որդուն հանձնեց Գրիգորին, իսկ Իվանեն մահացել է, ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, 1233—4 թվականներին, հետևապես 35—36 տարի առաջ նա տունը և տղան չէր հանձնի Գրիգորին,—արձանագրության մեջ՝ «զի ոչ ունէին զաւակ» օգտագործված է հոգնակի իմաստով, հայտնի է, որ Ավագը արու զավակ չուներ, այստեղ «ունէին»-ը վերաբերում է Իվանեին և Ավագին, այսինքն՝ նրանց տնտեսությունը կամ իշխանությունը, Իվանեի՝ թոռ կամ Ավագի՝ տղա իմաստով ուղղակի ժառանգորդելու մասին է խոսքը. «Եւ իւրեան ազգի առաջնորդ կացոյց»[52]—ղեկավար, կառավարիչ նշանակեց։

50 Վիմական տարեգիր, էջ 43։
51 Գանձակեցի, էջ 210։
52 Վիմական տարեգիր, էջ 43։

Կոնկրետ այս արձանագրության մասին Հ. Մանանդյանի կարծիքը, որ նշված Գրիգորները տարբեր անձնավորություններ են, սխալ է։ Գ. Հովսեփյանը ընդհանրապես մատենագրական 4 արձանագրություններում հիշված Գրիգորները միևնույն անձնավորությունն է համարում։ Գոշավանքի 1198 թվականի, Հոռոմսի 1228 թվականի և Գանձակեցու մոտ պահպանված Գրիգորների միևնույն անձնավորությունը լինելու մասին, նորից ևնք կրկնում, երկու կարծիք չի կարող լինել։

1198 թվարկությամբ արձանագրության տարեթիվը պետք է լինի 1220-ական թվականների վերջերին։ Ինչպես տարեթիվը, նույնպես և, մեր կարծիքով, Գոշա վանքի արձանագրության մեջ Գրիգորի հոր անունը շփոթված է, Սմբատի փոխարեն պետք է լինի Հասան, «որդւոյ մեծին Վախտանգայ, կողմնապետաց աշխարհին Արցախոյ...»[53]։

Մատենագրության մեջ հեջուբ բառի մասին մի շարք հետազոտողներ իրենց կարծիքներս են հայտնել. այսպես, Գ. Հովսեփյանը «հեջուբները իշխանական տների անմիջական վարիչներն էին կամ վերակացուները»[54]. նույն կարծիքն են հայտնել և ակադեմիկոս Հ.Մանանդյանը և պրոֆ. Սամվելյանը[55], միաժամանակ Հ. Աճառյանը, Հ. Մանանդյանը և պրոֆ. Ս. Եղիազարովը հեջուբը համազոր են համարել սենեկապետ հասկացությանը[56]։

* * *

Այսպիսով, վերը շարադրվածից կարելի է հանգել այն եզրակացության, որ Զաքարյան ֆեոդալական իշխանության պետական-հասարակական կառուցվածքը ունեցել է ֆեոդալական հիերարխիկ բնույթ։ Զաքարյան ֆեոդալական տունը, որպես այդ հիերարխիկ հասարակությունը գլխավորող-կառավարող ուժ, ունեցել է իր պետական վարչական ապարատը, արքունիքը—«դիվանը»—«տունը», որտեղ որոշվել են պետական, վարչական, ֆինանսական, ռազմական կարևոր գործերը, պաշտոնեության ցանցը, որին գլխավորել է արքունի գործակալը—վեզիրը—մսախուրթ—ուխուցեսը, օժտված վարչական—ֆինանսական ֆունկցիաներով, կողմակալությունները ի դեմս հայ խոշոր ֆեոդալական տների, որոնք իրենց իշխանություններում հանդես են եկել կենտրոնական իշխանության պետական-վարչական ապարատի ներկայացուցիչների—գործակալների դերում, սպարապետությունը—զինվորական գլխավոր հրամանատարությունը ի դեմս մեծ տիրույթների կառավարման համար գործածության մեջ է մտել ամիրայության ինստիտուտը։ Ամիրաները՝ հարկային-ֆինանսական գործունեության ասպարեզում ունեցել են իրենց վարչական ապարատը՝ ի դեմս ձեռնավորների—հարկահանների։

Զաքարյան ֆեոդալական տան երեք ճյուղերի և նրանց խոշոր վասալների իշխանությունները, իրենց հերթին, որպես ինքնուրույն պետական միավորումներ, ունեցել են իրենց պաշտոնեությունը, որին գլխավորել են հեջուբները—փոքր մասշտաբի—արքունի վեզիրները, գործակալները։

---

53 Վիմական տարեգիր, էջ 13։

54 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 21։

55 Ս. Սամվելյան, Նշված աշխատ., էջ 241—42, Հ. Մանանդյան, Գ, էջ 171։

56 Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. Դ, էջ 257, Հ. Մանանդյան, Գ, էջ 171։ Егиазаров С. Исследования по истории армянского права, Киев, 1919, стр. 26.